

## Հավելված T2: TK-12 Դպրոցներում COVID-19-ով Վարակման Կառավարման Ծրագրի Արձանագրություն

**Վերջին Թարմացումներ.** (Փոփոխությունները նշված են դեղին գույնով)

3/11/2021.

- Վերացվել է համընդհանուր կարանտինի պահանջը վարակված անձի հետ իրենց վարակիչ ժամանակահատվածում նույն խմբում կամ դասարանում գտնվող բոլոր անհատների համար:
- Թարմացվել են պատվաստված անձանց կարանտինից ազատելու չափորոշիչները՝ համապատասխանեցնելու CDC-ի ուղեցույցին:

Համայնքային մակարդակով COVID-19-ով վարակված անձանց հետ շփման զսպմանը նպատակաուղղված հանրային առողջապահության արձագանքը կարող է օգնել՝ առավելագույնի հասցնելու Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջապահության Վարչության՝ COVID-19-ի արձագանքի ազդեցությունը:

Տարրական և միջնակարգ դպրոցները, որոնք սպասարկում են Միջանկյալ մանկապարտեզից մինչև 12-րդ դասարանի աշակերտներին (TK-12 Դպրոցներ), հուսալի համայնքային գործընկերներ են, որոնք կարող են օգնել ՀԱՎ-ին (DPH)՝ բարելավելու Հանրային Առողջապահության կողմից արձագանքի ժամկետը և ազդեցությունը՝ COVID-19-ով Վարակման Կառավարման Ծրագրի (EMP) արագ գործարկման միջոցով: Վարակման Կառավարման Ծրագրի (EMP) անհապաղ իրականացումը դպրոցներում COVID-19-ով վարակման մեկ դեպքի հայտնաբերման ժամանակ, կարող է արագացնել վարակի տարածման կանխարգելումը և կանխել բռնկումները:

TK-12 դպրոցներում COVID-19-ով վարակման 1, 2, 3 և ավելի դեպքերի կառավարման քայլերը նկարագրված են ստորև և ամփոփված են Հավելված Ա-ում: Քանի որ TK-12 դպրոցներում COVID-19-ով վարակման կառավարման աղբյուրների հասանելիության աստիճանը տարբեր է, ուստի *պահանջվող* քայլերն այն նվազագույն տարրերն են, որոնք պետք է ներառվեն դպրոցի EMP-ում: Վարակման կառավարման համար *առաջարկվող* քայլերը ներառում են ոչ պարտադիր տարրեր այնտեղ, որտեղ դպրոցական ռեսուրսները բավարար են: Ներկայացված պահանջները և առաջարկները վերաբերում են TK-12-ի ուսումնական և ոչ ուսումնական հաստատություններին, որոնք սպասարկում են TK-12 դպրոցները: Սույն ծրագրի նպատակներով <<Դպրոց>> բառը վերաբերում է TK-12-ի և՛ ուսումնական և՛ ոչ ուսումնական հաստատություններին: TK-12 դպրոցների համար նախատեսված լրացուցիչ աղբյուրներ կարելի է գտնել [COVID-19-ի՝ TK-12 դպրոցների համար նախատեսված Գործիքակազմում](#):

**Վարակման Կառավարման Ծրագրավորումը Նախքան Դպրոցում COVID-19-ի 1 Դեպքի  
Հայտնաբերումը**

- ❑ *Պահանջվում է.* Դպրոցում նշանակված COVID-19-ին հետևելու Համապատասխանության Աշխատանքային Խումբ, որը պատասխանատու է COVID-19-ի հետ կապված անվտանգության բոլոր արձանագրությունները կազմելու և իրականացնելու համար, ինչպես նաև ապահովելու, որ աշխատակազմը և աշակերտները տեղեկացված լինեն COVID-19-ի մասին: Դպրոցում COVID-19-ին հետևելու համար նշանակված Համապատասխանության Աշխատանքային Խմբի Պատասխանատուն , որը հանդիսանում է դպրոցը ՀԱՎ- ի հետ կապող անձ, իրականացնում է հաստատության մակարդակով տեղեկությունների տարածումը և թերևսացնում է հանրային առողջապահության գործը:
- ❑ *Պահանջվում է.* Դպրոցը պետք է հետևի Հանրային Առողջապահության [Որոշումներին](#) , որոնք վերաբերում են այն անձանց, կամ դպրոցում նրանց հետ շփում ունեցած անձանց, որոնք դեռևս COVID-19-ի թեստ չեն հանձնել, սակայն մինչև դպրոց մուտք գործելը կամ դպրոցում գտնվելիս նրանց ախտանիշների ստուգման պատասխանը դրական է եղել:
- ❑ *Պահանջվում է.* Ծրագիր, որով նախատեսվում է, որ բոլոր աշակերտները և աշխատակիցները, ովքեր COVID-19-ին համահունչ ախտանշաններ ունեն, կամ գտնվում են կարանտինի մեջ, որովհետև դպրոցում շփվել են վարակված(ներ)ի հետ, ունենան COVID-19-ի թեստավորման հնարավորություն կամ թեստավորվեն:

**Վարակման Կտրամարումը Դպրոցում COVID-19-ով Վարակման 1 Ղեպքի Ժամանակ**

- ❑ *Պահանջվում է.* Հաստատված COVID-19-ով վարակման (աշակերտ կամ աշխատակից) 1 ղեպքի հայտնաբերումից հետո, Դպրոցի Համապատասխանության Աշխատանքային Խումբը պետք է կարգադրի, որպեսզի այդ անձը հետևի COVID-19-ի համար Տնային Մեկուսացման Ցուցումներին ([ph.lacounty.gov/covidisolation](http://ph.lacounty.gov/covidisolation)): ՆԿԱՏԻ ՈՒՆԵՑԵՔ՝ հաստատված COVID-19-ով վարակված անձ է համարվում այն անձը, որի COVID-19-ի թեստը դրական է:
- ❑ *Պահանջվում է.* Դպրոցի Համապատասխանության Աշխատանքային Խումբը տեղեկացնում է վարակված ղեպքին, որ Հանրային Առողջապահությունը անմիջապես կապվելու է նրա հետ՝ Հանրային Առողջապահության Վարչության Վարակակիրների և Շփումների Քննության Ծրագրի միջոցով՝ լրացուցիչ տեղեկություններ հավաքելու և վարակվող անձի մեկուսացման Առողջապահության Պատասխանատուի հրամանը տալու համար: *Պահանջվում է.* Դպրոցի Համապատասխանության Պատասխանատուն պետք է Հանրային Առողջապահության Վարչությանը (DPH) զեկուցի (1) հիվանդանալուց առաջ 14 օրերի ընթացքում ցանկացած պահի դպրոցում գտնված հաստատված COVID-19-ով վարակված աշխատակիցների և երեխաների մասին, (2) դպրոցում գտնվող այն անձանց մասին, որոնք շփվել են վարակված անձի հետ՝ վերջինիս վարակող եղած ժամանակահատվածում: Վարակվելու սկիզբ է համարվում COVID-19-ի ախտանիշների դրսևորման առաջին օրը, կամ COVID-19-ի թեստ հանձնելու օրը՝ կախված նրանից, թե որն է ավելի շուտ տեղի ունեցել:
  - Անձը համարվում է վարակող իր ախտանիշներն ի հայտ գալուց 2 օր առաջ և մինչև այն պահը, երբ իրենից այլևս չի պահանջվում մեկուսանալ (օրինակ՝ առանց ջերմիջեցնող դեղորայքի օգտագործման ջերմություն չի ունեցել առնվազն 24 ժամ և մյուս ախտանիշները բարելավվել են և ախտանիշներն ի հայտ գալուց հետո անցել է առնվազն 10 օր): Անձը, որի COVID-19-ի թեստի պատասխանը դրական է, սակայն

չունի ախտանիշներ, համարվում է վարակող՝ սկսած թեստը հանձնելուց 2 օր առաջ և մինչև իր թեստին հաջորդող 10 օրը: Անձը համարվում է վարակված անձի հետ՝ վերջինիս վարակող եղած ժամանակահատվածում նրա հետ շփված անձ, եթե համապատասխանում է ստորև թվարկված կետերից որևէ մեկին.

- 24 ժամվա ընթացքում վարակված անձից գտնվել է 6 ոտնաչափի հեռավորության միջակայքում 15 րոպեից ավել ժամանակով,
  - Չպաշտպանված շփում է ունեցել COVID-19-ով հաստատված անձի մարմնի հեղուկների և/կամ մարմնի արտազատումների հետ (օրինակ՝ հագացել կամ փռշտացել են իր ուղղությամբ, նույն սպասքից է օգտվել կամ թքի հետ է շփվել, կամ խնամել է վարակվածին՝ առանց համապատասխան պաշտպանիչ միջոցների):
  - **ՆՇՈՒԲ**. Վարակման ազդեցությունները կվերանայվեն՝ գնահատելու համար, թե որ անձանցից է պահանջվում կարանտին պահպանել, ներառյալ վարակված անձի նույն խմբում կամ դասարանում գտնվող բոլոր անձանց կարանտին անցկացնելու հնարավորությունը, եթե հնարավոր չէ բացառել ամբողջ խմբի վարակման ազդեցությունը:
- Հանրային Առողջապահության Վարչությանը COVID-19-ով վարակման դեպքերի մասին նախընտրելի է տեղեկացնել ապահով առցանց զեկուցման տարբերակով, և դա կարելի է անել համակարգիչով կամ հեռախոսով, որոնք հասանելիություն ունեն անվտանգ վեբ-հավելվածին՝ <http://www.redcap.link/lacdpheducationsector.covidreport>: Եթե առցանց զեկուցել հնարավոր չէ, ապա կարելի է զեկուցել ինքնուրույն՝ ներբեռնելով և լրացնելով [COVID-19-ի Դեպքերի և Կոնտակտների Ցանկը Կրթական Ոլորտի համար](#), և այն ուղարկելով [ACDC-Education@ph.lacounty.gov](mailto:ACDC-Education@ph.lacounty.gov) էլեկտրոնային հասցեին: Դեպքի մասին բոլոր ծանուցումները անհրաժեշտ է ներկայացնել դեպքի մասին տեղեկանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

☐ *Պահանջվում է*. Աշակերտները և աշխատակիցները, որոնք հաստատվել են որպես դպրոցում վարակված անձի հետ շփում ունեցած անձինք, Դպրոցի Համապատասխանության Աշխատանքային Խմբի կողմից նամակով կամ հաղորդակցման այլ եղանակով տեղեկացվում են վարակման մասին: Դպրոցում Վարակման Մասին Ծանուցման նամակի ձևանմուշը հասանելի է [Կրթական Հաստատությունների Համար Նախատեսված COVID-19-Ի Ծանուցման Նամակների Ձևանմուշի](#) էջում: Վարակման վերաբերյալ ծանուցումը պետք է ներառի հետևյալ հաղորդագրությունները.

- Վարակված անձի հետ շփված աշակերտներն ու աշխատակիցները պետք է COVID-19-ի թեստ հանձնեն՝ անկախ նրանից ախտանշաններ ունեն, թե ոչ, և թեստի արդյունքների մասին տեղեկացնեն դպրոցին: Դրա հիման վրա կորոշվի դպրոցում հիվանդության տարածման չափը և դա հիմք կդառնա վերահսկողության հետագա միջոցառումների համար: Թեստավորման ռեսուրսները ներառում են. Աշխատակիցների Առողջապահական Ծառայությունները կամ Մասնագիտական Առողջապահական Ծառայությունները, Աշակերտների Առողջապահական Կենտրոնը, Անհատական Առողջապահական Ծառայություն Տրամադրողները, Համայնքային Թեստավորման Կենտրոնները. [covid19.lacounty.gov/testing](https://covid19.lacounty.gov/testing): Այն անհատները, ովքեր ունեն օգնության կարիք բժիշկ գտնելու հարցում, կարող են զանգահարել Լոս Անջելեսի Շրջանի Տեղեկատվական գիծ՝ 2-1-1 հեռախոսահամարով, որը հասանելի է 24/7:

- Վարակված անձի հետ շփում ունեցած աշակերտներն ու աշխատակիցները պետք է ինքնակարանտինի անցնեն (մնան իրենց տանը կամ այլ բնակավայրում՝ մյուսներից առանձնացած) և վերահսկեն իրենց ախտանիշները՝ 10 օր շարունակ՝ սկսած այն օրվանից, երբ նրանք վերջին անգամ շփվել են վարակված անձի հետ՝ վարակող եղած ժամանակահատվածում (ինչպես նշված է վերևում), և նույնիսկ, եթե կարանտին պահպանելու ընթացքում իրենց թեստի պատասխանը լինի բացասական: Եթե նրանք մնում են ասիմպտոմ, ապա կարանտինից ազատվում են 10-րդ օրվանից հետո, սակայն պետք է շարունակեն հետևել իրենց առողջությանը և խստորեն պահպանեն COVID-19-ի կանխարգելիչ նախազգուշական միջոցները՝ մինչև 14-րդ օրը: Նշում. անձի մոտ, որի թեստի պատասխանը բացասական է, կարող է հետագայում զարգանալ հիվանդությունը՝ ախտանշաններով կամ առանց ախտանշանների, եթե թեստն արվել է ինկուբացիոն շրջանում (օր.՝ վարակված անձի հետ շփումից մինչև հիվանդության սկիզբը ընկած ժամանակահատվածում): COVID-19-ի Տնային Կարանտինի Ուղեցույցը հասանելի է՝ [ph.lacounty.gov/covidquarantine](http://ph.lacounty.gov/covidquarantine):
  - ԾԱՆՈՒՑՈՒՄ. Պատվաստված անձանցից, որոնք հանդիսանում են հաստատված վարակված անձի հետ սերտ շփում ունեցող անձինք, չի պահանջվում կարանտին պահպանել և COVID-19-ի թեստ հանձնել, եթե նրանք բավարարում են հետևյալ բոլոր չափորոշիչները. (1) ամբողջությամբ պատվաստված են (օր.՝  $\geq 2$  շաբաթ՝ COVID-19-ի երկու չափաբաժնից բաղկացած պատվաստանյութի երկրորդ չափաբաժինը ստանալուց հետո կամ  $\geq 2$  շաբաթ՝ մեկ չափաբաժին պարունակող COVID-19-ի պատվաստանյութի մեկ չափաբաժինը ստանալուց հետո) և (2) վարակված անձի հետ վերջին շփումից հետո շարունակել են ասիմպտոմատիկ մնալ (ախտանիշներ չեն դրսևորվել):
  - ՀԱՎ-ը կապ կհաստատի վարակված աշակերտների և աշխատակիցների հետ, որոնք բավարարում են կարանտին պահպանելու պահանջը՝ ՀԱՎ-ի Վարակված Անձանց և նրանց Շփումների Քննության Ծրագրի միջոցով, որպեսզի հավաքագրի լրացուցիչ տեղեկություններ և հրապարակի Առողջապահության Պատասխանատուի Կարանտինի Հրամանը:
- Առաջարկվում է.* Դպրոցի Համապատասխանության Աշխատանքային Խումբը կորոշի, թե արդյոք անհրաժեշտ է լրացուցիչ ծանուցում, որպեսզի դպրոցական ավելի լայն համայնքին տեղեկացվի դպրոցում վարակման դեպքի և COVID-19-ի տարածումը կանխելու համար ձեռնարկված նախազգուշական միջոցառումների մասին: Ընդհանուր ծանուցման նամակի ձևանմուշը հասանելի է՝ [Կրթական Հաստատությունների Համար Նախատեսված COVID-19-ի Ծանուցման Նամակների Ձևանմուշի](#) էջում:

**Վարակման Կառավարումը՝ 14 Օրվա Ընթացքում Դպրոցում COVID-19-ով Վարակման 2 Դեպքերի Ժամանակ**

- Պահանջվում է.* 14 օրվա ընթացքում հաստատված 2 դեպքերի հայտնաբերումից հետո (աշակերտներ և/կամ աշխատակիցներ), դպրոցը պետք է հետևի 1 հաստատված դեպքի համար *պահանջվող* քայլերին:
- Առաջարկվում է.* Դպրոցի Համապատասխանության Աշխատանքային Խումբը որոշում է, թե արդյոք 2 դեպքերը համաճարակաբանորեն կապված են, թե ոչ, որը նշանակում է, որ երկու

վարակված անձինք նույն ժամանակահատվածում ինչ-որ պահի միասին, ներկա են եղել նույն միջավայրում՝ նրանցից մեկի կամ երկուսի վարակող լինելու ընթացքում\*:

*\*Անձը համարվում է վարակող իր ախտանիշների ի հայտ գալուց 2 օր առաջ և մինչև այն պահը, երբ իրենից այլևս չի պահանջվում մեկուսանալ (օրինակ՝ առանց ջերմիջեցնող դեղորայքի օգտագործման ջերմություն չի ունեցել առնվազն 24 ժամ ԵՎ, եթե մյուս ախտանիշները բարելավվել են, և ախտանիշների ի հայտ գալուց հետո անցել է առնվազն 10 օր): Անձը, որի COVID-19-ի թեստի պատասխանը դրական է, սակայն ախտանիշներ չունի, համարվում է վարակող՝ սկսած թեստը հանձնելուց 2 օր առաջ և մինչև 10 օր՝ թեստը հանձնելուց հետո:*

- Վարակված անձանց միջև համաճարակաբանական կապերի հայտնաբերումը կարող է պահանջել հետագա քննություն՝ գնահատելու վարակի պատմությունը և հայտնաբերելու բոլոր հնարավոր վայրերը և այն անձանց, որոնք կարող են վարակվածների հետ տվյալ հաստատության տարածքում շփված լինել՝ նրանց վարակող լինելու ընթացքում: ԾԱՆՈՒՑՈՒՄ. Էպիդեմիոլոգիական (համաճարակաբանական) կապերը ներառում են այն անձանց, որոնք ունեն նույնական կապվածություն միմյանց հետ, ինչպես օրինակ ֆիզիկական տարածքը համատեղ զբաղեցնելը (օրինակ՝ դասարանում, զբասենյակում կամ հավաքույթների ժամանակ), որը մատնանշում է հիվանդության փոխկապակցված տարածման ավելի բարձր հավանականություն տվյալ հաստատությունում, քան եզակի փոխանցումը ավելի լայն համայնքի շրջանակում:
- Եթե համաճարակաբանական կապեր չկան, դպրոցը պետք է շարունակի վարակման կանոնավոր կառավարումը:
- Եթե կան համաճարակաբանական կապեր, ապա դպրոցը պետք է ուժեղացնի ուսանողներին և աշխատակիցներին ուղղված նախազգուշական միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ ուղերձները, որպեսզի դպրոցում կանխվի վարակի տարածումը, ինչպես նաև նախաձեռնի տվյալ հաստատությանը հատուկ միջամտություններ:

**Վարակման Կառավարումը Դպրոցում COVID-19-ով Վարակման  $\geq 3$  Դեպքերի Ժամանակ՝ 14 Օրվա Ընթացքում**

- Պահանջվում է.* Եթե դպրոցը 14 օրվա ընթացքում հայտնաբերում է հաստատված 3 կամ ավելի վարակման խմբակային դեպք (աշակերտներ և/կամ աշխատողներ), ապա դպրոցը պետք է իրականացնի հետևյալ քայլերը.
- Անմիջապես զեկուցի խմբակային վարակման մասին Հանրային Առողջապահության Վարչությանը (DPH): Հանրային Առողջապահության Վարչությանը COVID-19-ով վարակման դեպքերի մասին նախընտրելի է տեղեկացնել ապահով առցանց զեկուցման տարբերակով, և դա կարելի է անել համակարգիչով կամ հեռախոսով, որոնք հասանելիություն ունեն անվտանգ վեբ-հավելվածին՝ <http://www.redcap.link/lacdph.educationsector.covidreport>: Եթե առցանց զեկուցել հնարավոր չէ, ապա կարելի է զեկուցել ինքնուրույն՝ ներբեռնելով և լրացնելով [COVID-19-ի Դեպքերի և Կոնտակտների Ցանկը Կրթական Ոլորտի համար](#), և այն ուղարկելով [ACDC-Education@ph.lacounty.gov](mailto:ACDC-Education@ph.lacounty.gov).

- Հանրային Առողջապահության Վարչությունը կվերանայի ներկայացված տեղեկությունները՝ պարզելու, թե արդյոք դա համապատասխանում է ստորև նկարագրված բռնկման չափանիշներին և կներկայացնի դպրոցին իր հետագա քայլերի մասին՝ 1 աշխատանքային օրվա ընթացքում: Բռնկման Չափանիշները. հաստատված ախտանիշներ ունեցող (սիմպտոմատիկ) և ախտանիշներ չունեցող (ասիմպտոմատիկ) առնվազն 3 COVID-19-ի դեպքեր, մի խմբում 14 օրվա ընթացքում, որի անդամները համաճարակաբանորեն կապված են իրար, չեն հանդիսանում միևնույն ընտանիքի անդամ և դպրոցից դուրս սերտ շփում չունեն միմյանց հետ: \*Դպրոցական խմբերը ներառում են այն անձանց, որոնք համատեղ անդամագրություն ունեն դպրոցում (օր. դասարան, միջոցառում դպրոցում, արտադպրոցական գործունեություն, ուսումնական-ակադեմիական դասընթաց, սպորտային թիմեր, ակումբներ, փոխադրումներ): Համաճարակաբանական կապերը պահանջում են, որ վարակված անձիք ինչ-որ պահի ներկա գտնվեն նույն տարածքում՝ նույն ժամանակահատվածում, վարակիչ լինելու ընթացքում:
  - Եթե բռնկման չափանիշները չբավարարվեն, Հանրային Առողջապահության Վարչությունը կհորդորի դպրոցին շարունակել վարակման կանոնավոր կառավարումը:
  - Եթե բռնկման չափանիշները համապատասխանում են, Հանրային Առողջապահության Վարչությունը կտեղեկացնի դպրոցին, որ ակտիվացվում է դեպքերի քննությունը, և հանրային առողջապահության քննիչը կհաղորդակցվի անմիջապես դպրոցի հետ՝ համակարգելու վարակի բռնկման արձագանքը:



## Հավելված A: Դպրոցում COVID-19-ով Վարակման Դեպքերի Կառավարման Քայլեր

<p><b>1 Դեպք</b></p>	<ol style="list-style-type: none"> <li>1) <i>Պահանջվում է.</i> Դպրոցը հրահանգում է վարակված անձին հետևել COVID-19-ի Տեսյին Մեկուսացման Ցուցումներին.</li> <li>2) <i>Պահանջվում է.</i> Դպրոցը տեղեկացնում է վարակված անձին, որ ՀԱՎ-ը անմիջականորեն կապ կհաստատի իր հետ ` հավելյալ տեղեկատվություն հավաքելու և Առողջապահության Պատասխանատուի Մեկուսացման Հրամանը հրապարակելու համար:</li> <li>3) <i>Պահանջվում է.</i> Դպրոցը պետք է աշխատի վարակված անձի հետ, որպեսզի հայտնաբերի դպրոցում նրա հետ շփված անձանց:</li> <li>4) <i>Պահանջվում է.</i> Դպրոցը տեղեկացնում է* վարակված անձի հետ դպրոցում շփված անձանց վերաբերյալ և հանձնարարում նրանց ինքնամեկուսանալ տանը և COVID-19-ի թեստ հանձնել: ԾԱՆՈՒՅՈՒՄ. Պատվաստված անձանցից, որոնք շփում են ունեցել վարակված անձի հետ, սակայն բավարարում են Վարակման Կառավարման Ծրագրում նշված հատուկ չափորոշիչները, չի պահանջվում կարանտին պահպանել և COVID-19-ի թեստ հանձնել:</li> <li>5) <i>Պահանջվում է.</i> Դպրոցը տեղեկացնում է վարակված անձի հետ դպրոցում շփված անձանց, որ ՀԱՎ-ը անմիջականորեն կապ կհաստատի նրանց հետ ` հավելյալ տեղեկատվություն հավաքելու և Առողջապահության Պատասխանատուի Մեկուսացման Հրամանը հրապարակելու համար:</li> <li>6) <i>Պահանջվում է.</i> Դպրոցը հաստատված դեպքի և դպրոցի տարածքում վարակված անձի հետ շփում ունեցած անձանց մասին զեկուցում է ՀԱՎ-ին ` 1 աշխատանքային օրվա ընթացքում:</li> <li>7) <i>Առաջարկվում է.</i> Դպրոցը ընդհանուր ծանուցում է ուղարկում * դպրոցական համայնքին, որպեսզի տեղեկացնի դպրոցում վարակի առկայության և ձեռնարկված նախազգուշական քայլերի մասին, որոնք կկանխեն վարակի տարածումը:                  *Ընդհանուր ծանուցման նամակի ձևանմուշը հասանելի է այստեղ` <a href="#">COVID-19 Template Notification Letters for Education Settings</a>.</li> </ol>
<p><b>2 Դեպքեր</b></p>	<ol style="list-style-type: none"> <li>1) <i>Պահանջվում է.</i> Հետևել 1 հաստատված դեպքի համար պահանջվող քայլերին:</li> <li>2) <i>Առաջարկվում է.</i> Եթե հայտնաբերվում են 2 դեպքեր 14 օրվա ընթացքում, դպրոցը պետք է զուգահեռ աշխատի ՀԱՎ-ի հետ ` որոշելու, թե արդյոք դեպքերը համաճարակաբանորեն(epi) կապված են: Եթե համաճարակաբանական կապերը առկա են, ապա ECE հաստատությունները կիրառում են վարակի վերահսկման լրացուցիչ միջոցառումներ:</li> </ol>
<p><b>3+ Դեպքեր</b></p>	<ol style="list-style-type: none"> <li>1) <i>Պահանջվում է.</i> Եթե 14 օրվա ընթացքում 3 կամ ավելի խմբակային վարակման դեպք է հայտնաբերվում, դպրոցը պետք է անմիջապես տեղեկացնի այդ մասին ՀԱՎ-ին:</li> <li>2) <i>Պահանջվում է.</i> ՀԱՎ-ը որոշում է, թե արդյոք այն համապատասխանում է բռնկման չափանիշներին: Եթե բռնկման չափորոշիչները բավարարվում են, ապա ՀԱՎ-ը գործարկում է դեպքերի քննություն, և հանրային առողջապահության Քննիչը կապ է հաստատում դպրոցի հետ ` համակարգելու բռնկման հետաքննությունը:</li> </ol>